Դերգեա—Ղուլին 1732 թ.ին վերադարձաւ Պարսկաստանից Բագու։ Ռուսաց կառավարութիւնից ներումն ստացաւ և տեղափոխուեց Մաշտագա գիւղը, իսկ քաղաքը այդ ժամանակ կառավարում էր Սալիմ խանը՝ հիմայ գոյութիւն ունեցող Սէլիմխանով ազգի նախնիքը։

1735 թ.ին Կայսերուհի Աննա Իօանովնայի կամքով Բագուից և միւս Կասպեան նահանգներից զօրքերը յետ կանչուեցան Ռուսաստան։ Դերգեա – Ղուլին և Սէլիմ խանը մատնուած էին Նադիր Շահին, որը առաջինին իւր որդու Միրզայ Մահմէդի հետ ընդունեց ծառայութեան, իսկ երկրորդին մահուան դատապարտեց դէպի ռուսները ունեցած հաւատարմութեան համար։ Դերգեա—Ղուլիին և նորա որդի Միրզա – Մահմէդին Նադիր Շահը շնորհեց խանի տիտղոս, իրանց փայլուն քաջագործութիւնների համար լեզգիների հետ ունեցած կռուի ժամանակ. այդ կռիւներից մէկում Շամախու մօտ, Դերգեա – Ղուլիի նոյն իսկ ոտքը վիրաւորեցին։ Բայց Նադիր Շահը չնայելով նորա վերջին մատուցած ծառայութիւններին՝ Բագուում խան նշանակեց մի հասարակ գիլանեցու, Ղալիմա անունով, որը վայելում էր նորա առանձին ուշադրութիւնը։

Դերգեա—Ղուլի խանը Նադիր Շահի զօրքի հետ Պարսկաստան վերադառնալիս մեռաւ Նիրազում, թողնելով արժանաւոր զինուորի փառք և մեծ յարգանք իւր հայրենակիցների սրտերում։

Նորա որդի Միրզա՝ Մահմէդ խանը ծառայելով Նադիր Շահի բանակի մէջ, վաստակեց մեծ յարգանք։ Նադիր Շահը ընդունում էր նորան իբրեւ մօտ և նշանաւոր անձնաւորութիւն. ուստի նշանակեց Գիլանի Վեալի, այսինքն Գիլանի Փոխարքայ։

Միրզա Մահմէդ խանը Բագուայ խանութիւնը ձեռք ձգելու համար, ինչպէս վկայում են հին բնակիչները, ունեցել է հետեւեալ յաջող հանգամանքը. Նադիր Շահին իմայ էին տուել, որ Ռուսաց Կայսրուհի Էլիսաւետա Պետրովնան ուղարկում է իրան Շահին և նորա հարեմի համար հարուստ ընծաներ, որոնք բաղկացած էին թանկագին իրերից։ Ընծաները ընդունելու և տեղ հասցնելու համար հարկաւոր էր ուղարկել Էնզէլի մի հաւատարմատար։